04402155
Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի մարզ
Ջանֆիդայի գյուղապետարան

04402155
Республика Армения
Армавирский марз
Джанфидинский
Муниципалитет

Հասցե գ. Ջանֆիդա

Адрес. с.Джанфида

Թիվ 21. 13. 03. 2013 թ.

Номер 21. 13. 03. 2013.г

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝
Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի փետրվարի 20-ի թիվ 01 նիստի որոշումները:

Առդիր 18 թերթ:

Համայնքի ղեկավար՝

2548-13
13 03 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՋԱՆՖԻԴԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

2013 թվականի փետրվարի 20

թիվ 01 նիստի
թիվ 01 որոշում

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 12-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի փետրվարի 20-ի թիվ 01 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ՝ | կողմ/ստ./ | դեմ /ստ/ | ձեռնպահ / ստ/ |
|---|---|---|---|
| 1. Ամիրխանյան Անդրանիկ Ամիրխանի | [signature] | ------------ | ------------------ |
| 2. Այվազյան Արտավազդ Համազասպի | [signature] | ------------ | ---------------- |
| 3. Այվազյան Հայաստ Դավիթի | [signature] | ------------ | ---------------- |
| 4. Ղանիեյան Սևակ Զավենի | [signature] | ------------ | ---------------- |
| 5. Հարությունյան Դավիթ Սլավիկի | [signature] | ------------ | ---------------- |
| 6. Եղիազարյան Ջավահիր Նարիբեկի | [signature] | ------------ | ---------------- |

Համայնքի ղեկավար՝ [signature] Ն. Եղիազարյան

2013 թվականի փետրվարի 20
Ջանֆիդա

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ԶԱՆՖԻԴԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի
ԹԻՎ 01 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԹԻՎ 01 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետությա Արմավիրի մարզի Զանֆիդա գյուղական համայնքի Ավագանու 2013 թվականի փետրվարի 20-ի թիվ 01 հերթական նիստի.

1 . Օրակարգ հաստատելու մասին:

Զեկ. Ռ. Եղիազարյան

2. Զանֆիդա համայնքի 2013-2016 թվականների զարգացման քառամյա ծրագրի մասին:

Զեկ. Ռ. Եղիազարյան

3 . Զանֆիդա համայնքի 2013 թվականի ավագանու նիստերի ժամանակացույց հաստատելու մասին:

Զեկ. Ռ. Եղիազարյան

4 . Համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմը որոշելու մասին:

Զեկ. Ռ. Եղիազարյան

5 . Գումար տրամադրելու մասին:

Զեկ. Ռ. Եղիազարյան

6 . 2012 թվականի բյուջեի կատարողականի հաշվետվության հաստատելու մասին:

Զեկ. Ռ. Եղիազարյան

7 . Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին:

Զեկ. Ռ. Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՆՖԻԴԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20

ԹԻՎ 01 ՆԻՍՏԻ
ԹԻՎ 02 ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՆՖԻԴԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016 ԹԹ. ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի 2013 -2016 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | կողմ /ստ/ | դեմ/ստ/ | ձեռնպահ /ստ/ |
|---|---|---|---|
| 1. Ամիրխանյան Անդրանիկ Ամիրխանի | ---------- | ---------- | ---------- |
| 2. Այվազյան Հայասա Դավիթի | ---------- | ---------- | ---------- |
| 3. Այվազյան Արտավազդ Համազասպի | ---------- | ---------- | ---------- |
| 4. Դանիելյան Սևակ Զավենի | ---------- | ---------- | ---------- |
| 5. Հարությունյան Դավիթ Սլավիկի | ---------- | ---------- | ---------- |
| 6. Եղիազարյան Ջավահիր Նարիբեկի | ---------- | ---------- | ---------- |

Ջանֆիդա համայնքի ղեկավար՝ Ա. Եղիազարյան
2013 թվականի փետրվարի 20
գ. Ջանֆիդա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՆՖԻԴԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016 ԹԹ. ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

# ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԿԱԶՄԵՑ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ

ԹԻՎ 2 ՈՐՈՇՄԱՄԲ

25.01.2013 Թ.

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՆՖԻԴԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016 ԹԹ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

### ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Արմավիրի մարզի տարածքում կան բազմաթիվ գյուղեր, որոնք բնակեցվել են սկսած հնագույն ժամանակներից և հանդիսանում են հայ ժողովրդի բնօրրան, սակայն պատմական և քաղաքական հանգամանքների բերումով բնակչությունը տարաբնակեցվել է, տարածքը ժամանակի ընթացքում բնակեցվել է զանազան քոչվոր, մահմեդական ցեղերով:
Հետագայում Արևմտյան հայաստանից 1828-1830 թթ. և 1915-1918 թթ. տեղի ունեցած զաղթի հետևանքով Արարատյան դաշտի գյուղերը մեծ մասամբ վերաբնակեցվեցին հայ բնակչությամբ: Ջանֆիդա գյուղի բնակիչների նախնիները ներգաղթել են հիմնականում 1914-1918 թթ. Մուշից, Ալաշկերտից, Հին Բայազեթից, Վանից, Դիադինից, Սուրմալուից և այլ վայրերից: Գյուղը գտնվում է Արաքս գետի ձախ ափին, մարզկենտրոնից հեռու է 13 կմ., ծովի մակերևույթից գտնվում է 840 մ բարձրության վրա: Ջանֆիդան սահմանակից է Փշատավան, Այգեշատ, Արմավիր, Նալբանդյան գյուղերին:
Ոռոգման ջուրը ստանում է հիմնականում Արաքս գետից: Համայնքի բնակչությանը խմելաջուրը մատակարարվում է 3 (երեք) խորքային արտեզյան հորերի միջոցով:
Կլիման խիստ կոնտինենտալ (անբարենպաստ) է, առանձին տարիներին ձմռան ցրտերը հասնում են, -30 C-ից ավելին, իսկ ամռան ամիսներին +40 C:
Պարբերաբար գրանցվում են կարկտահարության դեպքեր, ինչպես նաև ուշ գարնանային ցրտահարություններ, հորդառատ անձրևներ, որոնց հետևանքով բնակչությունը կրում է բերքի զգալի կորուստներ: Սակայն արդեն 6 տարի է, որ համայնքի տարածքում տեղադրվել են 6 հակակարկտային կայաններ, որոնց օգուտը հողատերերը զգացել են:

## ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչությունը՝ 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ 3408 մարդ է: Գյուղն ունի 888 ծուխ որոնցից 63-ը ընդգրկված են ընտանեկան նպաստի համակարգում:

## ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու կողմից, որոնք ընտրվում են 4 տարին մեկ անգամ: Ջանֆիդա համայնքի գյուղապետարանի աշխատակազմը ունի հետևյալ կառուցվածքը:

1. Համայնքի ղեկավար 1 դրույք
2. Համայնքի ղեկավարի տեղակալ 1 դրույք

3. Համայնքի ղեկավարի օգնական 1 դրույք

Համայնքային ծառայողներ

1. Համայնքի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար 1 դրույք
2. Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ 2 դրույք
3. Գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ 1 դրույք

Սպասարկող անձնակազմ

1. Գործավար 1 դրույք
2. Գյուղապետարանի շենքի պահակ 1 դրույք
3. Էլեկտրիկ 1 դրույք
4. Հավաքարար 1 դրույք
5. Մեխանիզատոր 1 դրույք
6. Հակակարկտային կայանի պահակ 3 դրույք
7. Մշակույթի տան պահակ 1 դրույք

Մանկապարտեզ

1. Գործադիր տնօրեն 1 դրույք
2. Հաշվապահ 1 դրույք
3. Դաստիարակ 3.75 դրույք
4. Դաստիարակի օգնական 3 դրույք
5. Երաժշտության դասատու 0.75
6. Խոհարար 1 դրույք
7. Պահակ 1 դրույք

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

1 «Վազգեն Սարգսյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ, աշխատակիցների թիվը 14
2. « Ջանֆիդա ԱԿ» ՓԲԸ աշխատողների թիվը 8
3. Մշակույթի տուն - 1 պահակ:

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքային սեփականության գույքի ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 4-ի N1585-Ն որոշմամբ:
Համայնքի գույքը ֆիզիկական և բարոյական զգալի մաշվածություն ունի:
Խմելու ջրի ներքին ցանցը գտնվում է անմխիթար վիճակում, մաշվել և կոռոզիայի են ենթարկվել խողովակները: Ներհամայնքային ճանապարհները տարին 2 անգամ գյուղապետարանի կողմից ավազապատվում են, սակայն անձրևներից հետո նախկին փոսերը առաջանում են: Գյուղը գազաֆիկացվում է: Գործընթացը շարունակվում է:

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում աղբահանման աշխատանքները կատարվում են գյուղապետարանի կողմից ամիսը 2 անգամ: Համայնքն ունի աղբաթափման համար հատկացված տարածք:
Համայնքը ոռոգման ջուրը ստանում է Արաքս գետից և արտեզյան ջրհորներից:
Խմելու ջրի մատակարարումը կատարվում է համայնքի խմելաջրի ցանցով արտեզյան հորերից:

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1 . Համայնքի վարչական տարածքը - 1486.5 հա. է, որոնք բաշխված են հետևյալ կերպ՝

1 . Գյուղ նշանակության հողեր - 1027.3հա

ա/բնակավայրային հողեր 335.17 հա

բ/ վարելահողեր 513. Հա.

գ / բազմամյա տնկարքներ 81.85 հա. /պտուղ 72.85հա., խաղող 9հա./

դ/ տնամերձեր 284. Հա.

2 . Արդյունաբերական հողեր 73.9 հա.

ա/ էներգետիկայի և կապի հողեր 5.32 հա.

բ/ Հատուկ պահպանվող տարածքներ 7.56 հա.

գ / Ջրային հողեր 13.1 հա.

դ/ Պետական նշանակության հողեր 37.1 հա.

ե/ Պատմամշակութային հողեր 6.0 հա.

զ/ տրանսպորտի հողեր 5.17

3. ընդհանուր օգտագործման 41.65 հա.

4 . Այլ հողատեսքեր 434 .4 հա.

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում զբաղվում են ցորենի, առվույտի, բանջար-բոստանային կուլտուրաների մշակությամբ: Համայնքի հողօգտագործողները զբաղվում են նաև խաղողագործությամբ և պտղաբուծությամբ :

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի մեկ միջնակարգ դպրոց, որը 1996 թվականից անվանակոչվել է համազյուղացի, Արցախյան ազատամարտում զոհված՝ Յուրա Դաշտոյանի անվամբ: Վերջին տարիներին վերանորոգված, բարվոք վիճակում գտնվող դպրոցում սովորում են 425 աշակերտ: Ջանֆիդայի միջնակարգ դպրոցն ունի 63 աշխատող, որից 45 մանկավարժներ, որոնց 95 % բարձրագույն կրթությամբ են:

## ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի մեկ մշակույթի տուն, որը խիստ կարիք ունի հիմնարար նորոգման: ՈՒնի գրադարան 8845 գրքով, սակայն գրադարանի վարիչի հաստիքի կրճատման պատճառով չի գործում: Մշակույթի տանը կից համայնքն ունի սպորտ հրապարակ ֆուտբոլային խաղերն կազմակերպելու համար, իսկ բնակիչների ձմեռային հանգիստը կազմակերպելու համար գյուղի կենտրոնում խաղասենյակ է հատկացվել:
Գյուղի կենտրոնում համայնքի բնակիչ՝ բարերար Արթուր Կարապետյանի շնորհիվ կառուցվում է եկեղեցի, որը նախատեսված է բացել 2013 թվականի աշնանը:

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է մեկ «Զանֆիդա ԱԿ», ՓԲԸ-Ն որում աշխատում են 8 բուժ աշխատողներ: Այն համարվում է նաև ընտանեկան բժշկության կենտրոն:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները: Գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և բարեկեցիկ բնակավայր: Զարգացնել գյուղատնտեսությունը, համայնքին ապահովել շուրջօրյա անհրաժեշտ որակի խմելաջրով, վերանորոգել գյուղամիջյան ճանապարհները: Լավագույն ձևով կազմակերպել համայնքի բնակչության հանգիստն ու մշակույթային կյանքը, բարելավել բնակչության առողջապահական խնդիրները: Հետևողական լինել մանկապարտեզի և դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին:

## ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

### ԾՐԱԳԻՐ 1

Համայնքի մշակույթի տան և Հայրենական Մեծ պատերազմի զոհված համագյուղացիների հուշարձանի կապիտալ վերանորոգում:

Ծրագրի նկարագրությունը ու հիմնավորումը

Համայնքի մշակույթի տունը և հուշարձանը իրենց շահագործման օրվանից մասնակի վերանորոգումներ են կատարվել, սակայն հրատապ է նրանց կապիտալ վերանորոգումները:

Ծրագրի հիմնական նպատակները և խնդիրները

Ակտիվացնել համայնքի մշակույթային կյանքը և բնակչության ակտիվ հանգիստը ճիշտ կազմակերպելը: Անցկացնել միջոցառումներ, կինոդիտումներ, խաղասենյակներ տրամադրել շախմատի, նարդու և այլ խաղերի համար:

Կնքել պայմանագրեր Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ, որի համաձայն ծրագրերով պահանջվող գումարի 10 %-ը կհատկացվի համայնքի բյուջեից, մնացածը ԾԻԳ-ի կողմից: կազմակերպել բարերարի և համայնքի ներդրումների հարցը: Ձեռք բերել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ:

### ԾՐԱԳԻՐ 2

Զանֆիդա համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգում

Ծրագրի նպատակն ու հիմնավորումը՝

Համայնքի մանկապարտեզը կառուցվել է 1969 թվականին:

Վերջին տարիներին չի վերանորոգվել: Գտնվում է վթարային վիճակում, չունի ջեռուցման համակարգ, որն էլ պատճառ է հանդիսանում, որ մանկապարտեզը շուրջ հինգ ամիս չի գործում: Համայնքի առաջնահերթ խնդիրներից մեկն է նշված կառույցի կապիտալ վերանորոգումն ու շահագործումը, որից հետո հնարավոր կլինի մանկապարտեզի աշխատանքները կազմակերպել շուրջ տարի:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակներն են՝
Բարձրացնել մատաղ սերնդի կրթությունը և դաստիարակությունը: Երիտասարդ ծնողներին օգնել, որպեսզի ազատ ժամանակ ունենան զբաղվելու գյուղատնտեսական աշխատանքներով և գյուղ մթերքների արտադրությամբ: Աշխատեն իրենց մասնագիտությամբ: Մանկապարտեզը գործի ամբողջ տարին:
Ծրագիրը իրագործելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝
Կազմել մանկապարտեզի շենքի վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը: Ձեռք բերել ներդրողների և դոնոր կազմակերպությունների համաձայնությունը վերանորոգման համար անհրաժեշտ գումար հատկացնելու համար:
Կազմակերպել բարերարների և համայնքի կողմից ներդրումների հարցը:
Ձեռք բերել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ:
Անցկացնել լոկալ /տեղային/ ներքին ջեռուցում:

Ծրագրից սպասվող արդյունքները

Ապահովել անհրաժեշտ պայմաններ երիտասարդ ընտանիքների կրթության և հոգևոր զարգացման համար: Համայնքում կբարձրանա ծնելիության աճը:

## ԾՐԱԳԻՐ 3

## ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 42 կմ., որից 3.5 կմ. ասֆալտապատվել է: Սույն ծրագրով առաջարկվում է ասֆալտապատել նախկին ասֆալտապատ ճանապարհներից 2 կմ. կենտրոնական ճանապարհը, իսկ գրունտային ծածկով ճանապարհներ բարեկարգել և կատարել ավազապատման աշխատանքներ:

### Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի հիմնական նպատակն է ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ՝ տարվա բոլոր եղանակներին: Վերացնել փողոցների ջրափոսերը:
Ծրագրի խնդիրները՝
Կազմել ծրագրի իրականացման համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերը: կատարել ավազի, խճաքարի փռում համայնքի գրունտային փողոցներում, ապագայում նախատեսելով ասֆալտապատման աշխատանքներ:

## ԾՐԱԳԻՐ 4

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների կանխատեսումը և գնահատումը:

Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքում այն ունի հետևյալ պատկերը.

| հ/հ | Եկամուտի տեսակը | 2012 թ. փաստացի | 2013 թ. նախատեսվ | 2014 թ. կանխատեսում | 2015 թ. կանխատեսում | 2016 թ. կանխատեսում |
|---|---|---|---|---|---|---|
| | Եկամուտներ ընդամենը | | 62825.9 | | | |
| 1 | Հողի հարկ | | 13.379 | | | |
| 2 | Գույքահարկ | | 4.350 | | | |
| 3 | Եկամտահարկ | | - | | | |
| 4 | Այլ հարկային եկամուտներ | | -- | | | |
| 5 | Տեղական տուրքեր | | 240 | | | |
| 6 | Այլ ոչ հարկային եկամուտներ | | 250 | | | |
| 7 | Պետական դոտացիա | | 33706.7 | | | |
| 8 | Վարձավճար | | 600 | | | |
| 9 | Եկ.կապիտալի գործ. | | 10.300 | | | |
| 10 | Տարեսկզբի ազատ մնացորդ | | 5.474 | | | |
| | Ընդամենը | | | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԶԱՆՖԻԴԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2013 թվականի փետրվարի 20 | թիվ 01 նիստի
թիվ 03 որոշում

# 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել Զանֆիդա գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի հերթական նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ՝ | կողմ /ստ/ | դեմ / ստ/ | ձեռնպահ / ստ/ |
|---|---|---|---|
| 1. Ամիրխանյան Անդրանիկ Ամիրխանի | | ---------------- | -------------- |
| 2. Այվազյան Հայասա Դավիթի | | ---------------- | -------------- |
| 3. Այվազյան Արտավազդ Համազասպի | | ---------------- | -------------- |
| 4. Դանիելյան Սևակ Զավենի | | ---------------- | -------------- |
| 5. Հարությունյան Դավիթ Սլավիկի | | ---------------- | -------------- |
| 6. Եղիազարյան Զավահիր Նարիբեկի | | ---------------- | -------------- |

Համայնքի ղեկավար՝ Ռ. Եղիազարյան

2013 թվականի փետրվարի 20
գ. Զանֆիդա

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՋԱՆՖԻԴԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի
ԹԻՎ 01 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԹԻՎ 03 ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքի ավագանու 2013 թվականի հերթական նիստերի ժամանակացույց:

| Հ/Հ | Նիստերը | Նիստերի օրերը |
|---|---|---|
| 1 | 1-ին նիստ | Փետրվարի 20-ին |
| 2 | 2 – րդ նիստ | Ապրիլի 26 -ին |
| 3 | 3 – րդ նիստ | Հունիսի 21 - ին |
| 4 | 4 – րդ նիստ | Օգոստոսի 20 - ին |
| 5 | 5 – րդ նիստ | Հոկտեմբերի 22 - ին |
| 6 | 6 – րդ նիստ | Դեկտեմբերի 23 - ին |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՋԱՆՖԻԴԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

---

2013 թվականի փետրվարի 20 — թիվ 01 նիստի
թիվ 04 որոշում

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին.

### ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ուժը կորցրած ճանաչել 2009 թվականի ապրիլի 30-ի Ջանֆիդա համայնքի ավագանու թիվ 05 նիստի՝ «համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու քանակական և անհատական կազմը» թիվ 02 որոշումը:
2. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում առաջարկել ավագանու 3 անդամների՝ Ամիրխանյան Անդրանիկ Ամիրխանի, Եղիազարյան Ջավահիր Նարիբեկի, Այվազյան Հայասա Դավիթի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ՝ | կողմ/ստ./ | դեմ /ստ/ | ձեռնպահ / ստ/ |
|---|---|---|---|
| 1. Ամիրխանյան Անդրանիկ Ամիրխանի | ------------- | ------------ | ----------------- |
| 2. Այվազյան Արտավազդ Համազասպի | ------------- | ------------ | ----------------- |
| 3. Այվազյան Հայասա Դավիթի | ------------- | ------------ | ----------------- |
| 4. Դանիելյան Սևակ Զավենի | ------------- | ------------ | ----------------- |
| 5. Հարությունյան Դավիթ Սլավիկի | ------------- | ------------ | ----------------- |
| 6. Եղիազարյան Ջավահիր Նարիբեկի | ------------- | ------------ | ----------------- |

Համայնքի ղեկավար՝ Ա. Եղիազարյան

2013 թվականի փետրվարի 20
Գ. Ջանֆիդա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՆՖԻԴԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2013 թվականի փետրվարի 20

թիվ 01 նիստի
թիվ 05 որոշում

# ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Դրամական օգնություն տալ Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղի սոց անապահով ընտանիքներին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ՝ | կողմ /ստ/ | դեմ/ստ/ | ձեռնպահ / ստ/ |
|---|---|---|---|
| 1. Այվազյան Անդրանիկ Ամիրխանի | | | |
| 2. Այվազյան Հայաստ Դավիթի | | | |
| 3. Այվազյան Արտավազդ Համազասպի | | | |
| 4. Դանիելյան Սևակ Զավենի | | | |
| 5. Հարությունյան Դավիթ Սլավիկի | | | |
| 6. Եղիազարյան Ջավահիր Նարիբեկի | | | |

Համայնքի ղեկավար՝ Ռ. Եղիազարյան

2013 թվականի փետրվարի 20
գ. Ջանֆիդա

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՋԱՆՖԻԴԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի
ԹԻՎ 01 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԹԻՎ 05 ՈՐՈՇՄԱՆ

## ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼ

| | |
|---|---|
| 1 . Նելգա Սվետլաննա | - 50 000 /հիսուն հազ./ ՀՀ դրամ |
| 2 . Չլոյան Ալմաստ | - 30 000 /երեսուն հազ./ ՀՀ դրամ |
| 3 . Հայրապետյան Հովհաննես | - 30 000 /երեսուն հազ./ ՀՀ դրամ |
| 4 . Դաշտոյան Էմմա | - 20 000 /քսան հազ./ ՀՀ դրամ |
| 5 . Մնացականյան Լուսիկ | - 20 000 /քսան հազ./ ՀՀ դրամ |
| 6 . Մելոյան Մանուշակ | - 20 000 /քսան հազ./ ՀՀ դրամ |
| 7 . Պետրոսյան Ժորա | - 20 000 /քսան հազ./ ՀՀ դրամ |
| 8 . Խաչատրյան Անդրանիկ | - 20 000 /քսան հազ./ ՀՀ դրամ |
| 9 . Չլոյան Լուսիկ | - 20 000 /քսան հազ./ ՀՀ դրամ |
| 10 . Ստեփանյան Անահիտ | - 20 000 /քսան հազ. / ՀՀ դրամ |
| 11 . Մկրտչյան Լևոն | - 20 000 /քսան հազ./ ՀՀ դրամ |
| 12 . Ղորղանյան Արթուր | - 20 000 / քսան հազ./ ՀՀ դրամ |
| 13 . Մարգարյան Հայկ | - 20 000 /քսան հազ./ ՀՀ դրամ |
| 14 . Ղարիբյան Մանվել | - 20 000 /քսան հազ./ ՀՀ դրամ |
| 15 . Կարապետյան Արսեն | - 50 000 /հիսուն հազ./ ՀՀ դրամ |
| 16 . Դավթյան Վալյա | - 45 000 /քառասունհինգ հազ./ՀՀ դրամ |
| 17 . Նաջարյան Վարուժան | - 30 000 /եռեսուն հազ. /ՀՀ դրամ |
| 18 . Սարգսյան Վարուժան | - 25 000 /քսանհինգ հազ./ ՀՀ դրամ |
| 19 . Մաթևոսյան Քաջիկ | - 20 000 /քսան հազ./ ՀՀ դրամ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՋԱՆՖԻԴԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

2013 թվականի փետրվարի 20

թիվ 01 նիստի
թիվ 06 որոշում

2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեի կատարողականի հաշվետվությունը՝ եկամուտներով և ծախսերով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ՝ | կողմ /ստ/ | դեմ /ստ/ | ձեռնպահ / ստ/ |
|---|---|---|---|
| 1. Ամիրխանյան Անդրանիկ Ամիրխանի | | ---------- | ---------- |
| 2. Այվազյան Հայասա Դավիթի | | ---------- | ---------- |
| 3. Այվազյան Արտավազդ Համազասպի | | ---------- | ---------- |
| 4. Դանիելյան Սևակ Զավենի | | ---------- | ---------- |
| 5. Հարությունյան Դավիթ Սլավիկի | | ---------- | ---------- |
| 6. Եղիազարյան Զավահիր Նարիբեկի | | ---------- | ---------- |

Համայնքի ղեկավար՝ Եղիազարյան

2013 թվականի փետրվարի 20
գ. Ջանֆիդա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՋԱՆՖԻԴԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2013 թվականի փետրվարի 20

թիվ 01 նիստ
թիվ 07 որոշում

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Զիջել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի բնակիչների ավտոմեքենաների գույքահարկերից՝ համաձայն հավելվածի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ՝ | կողմ / ստ/ | դեմ / ստ/ | ձեռնպահ / ստ/ |
|---|---|---|---|
| 1. Ամիրխանյան Անդրանիկ Ամիրխանի | | ---------- | ---------- |
| 2. Այվազյան Հայասա Դավիթի | | ---------- | ---------- |
| 3. Այվազյան Արտավազդ Համազասպի | | ---------- | ---------- |
| 4. Դանիելյան Սևակ Զավենի | | ---------- | ---------- |
| 5. Հարությունյան Դավիթ Սլավիկի | | ---------- | ---------- |
| 6. Եղիազարյան Զավահիր Նարիբեկի | | ---------- | ---------- |

Համայնքի ղեկավար՝ Ռ. Եղիազարյան
2013 թվականի փետրվարի 20
գ. Ջանֆիդա

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՋԱՆՖԻԴԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի
ԹԻՎ 01 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԹԻՎ 07 ՈՐՈՇՄԱՆ

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Սահակյան Աղասի Հակոբի - 10 000 ( տաս հազար) ՀՀ դրամ